Վարդապետը դարձեալ նրա բերնումն է դնում խաչը եւ այս գործողութիւնը կրկնւում է երեք անգամ:

«Ընկաւորը» բաւականին զգաստացած, ձայն է տալիս:

— Վանէցի Շուշան-խաթունը թող այստեղ հրամայէ, «աղան» (աստուածամայրը) կանչում է:

Շուտով երեւան է լինում Շուշան-խաթունը լի ահ ու դողով: Դա մի հարուստ վաճառականի կին է, որ աւելի քան տասն տարի ամուսնացած լինելով, տակաւին զաւակ չունի :

«Ընկաւորը» սկսում է բարբաջել.

— «Եղիսաբեթն աւետիս տոեց... կոյս Մարիամը յղացաւ... Գաբրիէլը ուրախացաւ... որդին արգանդումը ցնծացաւ..., Ո՞վ է, որ բաց է անում ամլութեան կապը... սուրբ տիրամայրն է այն...: Գոհացէք, ժողովուրդներ...: Ուրախ եղէք, ուխտաւորներ...: Աստուծոյ ատեանը բացոել է... Լոյսը վերեւից կաթել է...: Երանի՛ տեսնողին... երանի՛ լսողին...է:

Վարդապետը սկսում է բացատրել «ընկաւորի» խօսքերը. ասում է Շուշան-խաթունին, թէ «աղան» այսինքն՝ աստուածածինը, ընդունեց նրա խնդիրքը, թէ նրա ամլութեան կնիքը ջնջոեցաւ, եւ նա կծնէ մի որդի, որը մինչեւ եօթը տարի պէտք է նոիրոած լինի վանքին, ամէն տարի նրա տօնախմբութիւնների ժամանակ կատարելով տիրամօր ուխտագնացութիւնը եւ ողորմութիւն տալով նրա «խեղճերինէ:

Շուշան-խաթունը ուրախանում է եւ արձակելով իր պարանոցեն ծանրագին շղթան, զարդարած ոսկի դրամներով, ձգում է «ընկաւորի» առջեւը:

Մարգարէ կինը դարձեալ ընկնում է մտաւոր յափշտակութեան մէջ: Նրա բերանը սկսում է փրփրել. երեսի վրայ երեւում են զարհուրանքի նշաններ: Նա մրմնջում է, որպէս թէ խօսելով մի աներեւոյթ էակի հետ: Վարդապետը գործ է դնում խաչի ներգործութիւնը: Նա փոքր-ինչ ուշի գալով, ձայն է տալիս.

— Մշեցի Գրիգոր աղային կանչեցէք:

Յայտնւում է Գրիգոր աղան:

«Ընկաւորը» կարդում է պատգամը.

— Անարժանի վարձն է դաժան... Սեւ հաւեր, կարմիր կատու... նա թո՛ղ լինի ինձ վարձատու...: Քո սիրտն ինչո՞ւ չէ ցնծում... չցանած տեղից դու չես հնձում... : Ալաք... բալաք... ա՛ռ... չորս կողմը զառ... մէջն աբրեշում... Գնայ բե՛ր... Ուրախացիր... :